

**ԳԼՈՒԲԱԼԻԶԱՑԻԱՑԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ԴՐԱ ԲՆՈՒՑԹՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**
(մշակութաբանական տեսանկյուն)

Կառլեն Միրումյան

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլոբալիզացիան արդի քաղաքակրթության և քաղաքագիտության կարևոր հասկացություններից է: Այն համարվում է մարդկության, այսպես կոչված «քաղաքակիրթ աշխարհի» զարգացման ներկա փուլի գլխավոր գործոններից և ուղղություններից մեկը: Գլոբալիզացիայի գործընթացները վերջին տասնամյակում տեղ են գտել նաև ետխորհրդային պետություններում (այդ թվում՝ Հայաստանում), ինչը արտահայտվում է հասարակական և հոգևոր-մշակութային կյանքի տարբեր ոլորտներում: Այն ներկայացվում է որպես հասարակական զարգացման բնականոն, օբյեկտիվ և այլընտրանքային տարբերակ չունեցող գործընթաց՝ փաստորեն նույնացվելով «քաղաքակրթվածության» հետ: Սակայն նշված գործընթացը միանշանակ և միարժեք չէ: Մույն հոդվածում հայեցակարգային այլ դիրքերից քննարկվում են գլոբալիզացիայի որոշ դրսևորումներ Հայաստանում՝ կապված ի մասնավորի հոգևոր-մշակութային ոլորտի և արժեքանական համակարգի հետ:

Հայտնի է, որ հոգևոր մշակույթի իրական վիճակը, վերելքն ու անկումը սովորաբար պայմանավորված է լինում երկրի (ազգի) սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման, պետականության առկայության և հզորության աստիճանով: Սակայն առանձին դեպքերում և որոշ ազգերի մոտ հոգևոր մշակույթի զարգացումը անմիջապես չի առնչվում նշված գործոններին: Ավելին, հոգևոր մշակույթը կամ նախորդում է հիշյալ գործոնների երևան գալուն, կամ նրան քաղաքական բովանդակություն և ուղղվածություն է հաղորդվում: Այլ կերպ ասած՝ վերջին դեպքում այն ընդհանուր քաղաքական գործոնի կարգավիճակ է ստանում:

Խորհրդային ամբողջատիրական քաղաքական համակարգի փլուզման, ազգային-քաղաքական անջատողական խորքային շարժընթացների հետևանքով քայքայվեց նաև հոգևոր-մշակութային համակարգը: Նորա-

ստեղծ պետությունները կտրուկ հրաժարվեցին խորհրդային քաղաքականացված գաղափարախոսությունից և գաղափարականացված արժեհամակարգից, ինչը հանգեցրեց արժեքականական վակուումի առաջացմանը: Մակայն ոչ մի պետություն, ոչ մի հասարակություն (կամ ազգ) չի կարող գոյատևել առանց արժեքականական կողմնորոշիչների և սկզբունքների, հոգևոր-մշակութային համակարգի: Այնիսլ արժեքների համակարգ «մեկ օրում» չի ստեղծվում, դա անհամեմատ ավելի բարդ խնդիր է և ավելի երկարատև ժամանակ է պահանջում, քան քաղաքական կամ ռազմական հեղաշրջումը:

Արժեքականական վակուումը, «դատարկ» տարածությունները ետխորհրդային պետություններում, այդ թվում՝ Հայաստանում արագ լցվեցին տարաբնույթ արժեքներով՝ քաղաքական, կրոնաեկեղեցական, հոգևոր-բարոյական, տնտեսական և այլն, որոնց զգալի մասը անհարիր է երկրի և ազգի ավանդույթներին, ազգային մենթալիտետին և հոգեբանությանը: Արևմտյան քաղաքակրթության համամարդկային համարվող արժեքների, նորմերի, իդեալների հետ մեկտեղ Հայաստան են ներթափանցում նաև այլազան գաղափարներ և արժեքներ, ինչը էապես խաչընդոտում է սեփական, ազգային արժեքականական համակարգի լինելիությանը, համապատասխան կողմնորոշիչների և ուղենիշների որոնումներն ու մշակումը:

Հոգևոր-մշակութային (ևույնիսկ գաղափարախոսական) խնդրակարգը հետին պլան է մղվել, քանի որ այդ ոլորտում վարած քաղաքականության արդյունքները «այսօր» և անմիջականորեն չեն ազդում քաղաքական տեղաշարժերի, կոնկրետ գործողությունների և առանձին մարդկանց կենսագործունեության վրա: Այդ իսկ պատճառով օտարերկրյա և օտարածին արժեքներն ու նորմերը անարգել ներխուժում են Հայաստան՝ հեշտությամբ նվաճելով դատարկ տարածությունները և աստիճանաբար թելադրելով այլ արժեքականական խայտաբղետ գաղափարներ և սկզբունքներ: Ավելին, դա կատարվում է մեզ «օգնելու», «ուղիորդությունից» ազատելու, կրթելու, լուսավորելու, սովորեցնելու «նպատակով» (իմա՝ պատրվակով): Այս գործընթացները մեկնաբանվում և ներկայացվում են իբրև քաղաքակրթությունների (կամ մշակույթների) հանդիպում, երկխոսություն:

Հիշյալ երևույթները կարելի է բնական և օրինաչափ համարել արմատական քաղաքական տեղաշարժերի համատեքստում, այսինքն՝ օբյեկտիվ հիմք ունեն։ Այս կապակցությամբ միաժամանակ ծագում են մի շարք, այդ թվում՝ մեթոդաբանական բնույթի հարցեր. ա) որքանո՞վ ճիշտ է այժմ տեղի ունեցող հոգևոր-մշակութային գործընթացները գնահատել որպես մշակույթների «հանդիպում», առավել ևս՝ «երկխոսություն», այսինքն՝ այդ հասկացությունները որքանո՞վ են ճիշտ ու համարժեք արտացոլում առկա գործընթացներն ու դրանց ուղղվածությունը, բ) դրանք սոսկ մշակութային երևույթնե՞ր են, թե՞ ոչ մշակութային գործոնների արտահայտման, արտաքին ներգործության հետևանքներ են, այլ կերպ ասած՝ ընդհանուր քաղաքական հայեցակարգի ենթահամակարգերից են, գ) պե՞տք է կամ հնարավո՞ր է արդյոք դիմակայել այդ գործընթացներին ու եթե այո, ապա ինչպե՞ս և ինչպիսի՞ միջոցներով։

Այս և նմանօրինակ այլ հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ վերոհիշյալ հասկացությունների թե՛ տեսական, թե՛ պատմական բովանդակության բացահայտմանը, քանզի մշակույթների հանդիպումը նախ և առաջ պատմական երևույթ է։ Բացի այդ, պատմական անցյալը բովանդակում է խնդրո առարկայի սկզբունքորեն գրեթե բոլոր դրսևորումներն ու ձևերը, դրա հետ կապված հիմնահարցերը։ Ընդ որում, տարբեր ազգերի մոտ դրանք արտահայտվում են տարբեր կերպ։

Համաշխարհային մշակույթի պատմությունը Բարդ, հակասական և միաժամանակ դրա տարբեր բաղադրիչների՝ «ազգային տարբերակների» փոխազդեցության և փոխալսմանավորվածության գործընթաց է։ Ընդամիս, միայն պատմական հեռանկարի տեսանկյունից և պատմամշակութային ամբողջական դարաշրջանների համատեքստում են ի վերջո նշմարվում զարգացման օրինաչափություններն ու ընդհանրական գծերը։ Միաժամանակ պատմության ընթացքում մենք հանդիպում ենք մշակույթների փոխազդեցության ամենատարբեր ձևերի՝ սկսած անմիջական ազդեցություններից, փոխառություններից, յուրացումներից՝ ավարտած մշակութային «Բախմամբ» կամ «դիմակայությամբ»։

Հետազոտողներն ու քաղաքական գործիչներն անդրադառնում են գերազանցապես մշակույթների փոխազդեցության, այսպես ասած, «դրա-

կան» ձևերին, ինչը արդի քաղաքագիտության և մշակութաբանության մեջ սովորաբար արտահայտվում է մշակույթների «հանդիպում» և «երկխոսություն» տերմիններով: Սակայն նույն պատմությունը ցույց է տալիս, որ «մշակույթների հանդիպումը» հաճախ հանգեցնում է ոչ միայն երկխոսության, այլև բախմանն ու դիմակայությանը: Հետևաբար «մշակույթների հանդիպում» հասկացությունը չափազանց լայն է և ընդգրկուն: Այն պահանջում է տարբերակված մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Այն կարող է «բնական» բնույթ ունենալ՝ պայմանավորված լինելով մշակութային գործոններով և պատճառներով, բայց կարող է թելադրված լինել նաև այլ պետությունների (կամ ազգերի) քաղաքական նկրտումներով: Հնդ որում, խնդրի բարդությունը պայմանավորված է այն բանով, որ քաղաքական գործոնը կամ ենթատեքստը ոչ միշտ և ոչ բոլոր դեպքերում է ակնհայտ լինում:

Մշակութային դիմակայության ձևերը, ուղիները և դրանք ծնող պատճառները բազմազան են և որպես կանոն պայմանավորված են արտամշակութային գործոններով: Դրա մեջ միշտ էլ քողարկված կամ ակնհայտ ձևով արտահայտվում է ազգային, քաղաքական, կրոնակեղեցական և այլ կարգի դիմակայություն:

Միաժամանակ անհրաժեշտ է տարբերակել խնդրի քաղաքական կտրվածքը իշխող կամ գերիշխանության ձգտող ազգի (պետության) և արտաքին զավթողականության օբյեկտ դարձած ազգի (պետության) դեպքերը: Վերջին դեպքում մշակույթների «հանդիպումը» և դրա դրսևորման ձևերը զգալի չափով կախված են ազգի «մշակութային հասունությունից», ազգային մշակույթի ինքնությունից և համակարգվածությունից, հոգևոր-մշակութային ավանդույթների ուժից, «հանդիպման» սուբյեկտների կյանքում մշակութային գործոնի գործառության դերակատարությունից, ինչպես նաև զավթված ազգի հոգևոր ներուժից: Վերջին հանգամանքը զանազան (և բացատրելի) պատճառներով սովորաբար շրջանցվում կամ անտեսվում է մասնագիտական գրականության մեջ: Մինչդեռ այս երևույթի ուսումնասիրությունը չափազանց կարևոր նշանակություն կարող է ունենալ ազգի պատմական գոյատևման, կենսագործունեության, քաղաքակրթության պատմության մեջ խաղացած

դերի պարզաբանման, ազգային կեցության խորքային խթանիչ ուժի բացահայտման առումով:

Գիտական գրականության մեջ սովորաբար հետազոտության առարկա է դառնում մի մշակույթի (առավել բարձր զարգացած) ազդեցության գործընթացը մյուսի (ցածր զարգացած) վրա, մի մշակույթի կողմից այլազգի (առավել քաղաքակրթված) մշակութային արժեքների յուրացման, իսկ դրա շնորհիվ՝ մեկ ազգի՝ մյուսի վրա ունեցած քաղաքական ազդեցության աստիճանն ու ձևերը:

Նշված գործընթացներում կարելի է առանձնացնել երեք հիմնական բաղադրիչներ. ա) ազգ, որը ավելի բարձր և առաջադիմական մշակույթի կրող է, բ) ազգ, որը հարաբերականորեն թույլ զարգացած մշակույթի կրող է և գ) դարաշրջանի իրական պատմական համատեքստը, որի շրջանակներում էլ տեղի է ունենում մշակույթների «հանդիպումը»: Հարցի էությունը չի փոխվում, եթե մշակույթների կրողները չեն գտնվում իշխող և հպատակ ազգերի (միևնույն պետականության շրջանակներում) կամ զավթողականության սուբյեկտի և օբյեկտի հարաբերության մեջ: Դրանց բացակայության պարագայում մշակութային ազդեցությունը կամ ավելի ստույգ՝ ներգործությունը հանդես է գալիս որպես քաղաքական ազդեցության միջնորդավորված եղանակ:

Հայ մշակույթի բազմադարյան պատմության մեջ կարելի է բացահայտել քաղաքականությանը հայտնի «մշակույթների հանդիպման» ձևերից շատերը, թեև յուրահատուկ ազգային դրսևորմամբ:

Այսպիսով, մշակույթների հանդիպումը բարդ, բազմանիստ և բազմաշերտ երևույթ է, որտեղ միահյուսվում և յուրովի արտացոլվում է ազգային, սոցիալական, քաղաքական, կրոնա-եկեղեցական, գաղափարա-խոսական, հոգևոր-բարոյական և այլ գործոնների ամբողջ համալիրը: Այն երբեք չի դրսևորվում «մաքուր» ձևով, այսինքն՝ իբրև սոսկ մշակութային երևույթ: Ակնհայտ, թաքնված կամ «վերառված» ձևով այն ընդգրկում է բոլոր թվարկած գործոնները: Այլ հարց է, թե կոնկրետ դեպքում դրանցից որն է գերիշխողը, որքանով է գիտակցվում, շեշտվում և իրականացվում այս կամ այն գործոնը մշակույթների «հանդիպման» սուբյեկտների կողմից:

Մշակույթների «հանդիպումը» հատկապես դիմակայության և հակամարտության պարագայում, ի վերջո, ոչ այլ ինչ է, քան տարբեր ազգերի և պետությունների քաղաքական շահերի միջևորդավորված «հանդիպում», այդ թվում՝ բախում, դիմակայություն: Ընդամեն, եթե մշակույթների «հանդիպման» մյուս ձևերը ընդհանուր քաղաքական խնդիրների լուծման միջևորդավորված ձևեր են, ապա մշակութային դիմակայությունը, բախումը (ինչպես նաև մշակութային զավթողականությունը) կարելի է դիտել որպես անմիջական քաղաքական միջոց: «Մշակութային դիմակայություն» հասկացությունը կիրառելի է նախ և առաջ այն ազգի մշակութային գործունեության նկատմամբ, որը դարձել է արտաքին զավթողականության օբյեկտ: Իսկ այն ազգի (պետության) գործունեության նկատմամբ, որը հանդես է գալիս իբրև զավթողականության սուբյեկտ, կիրառելի է «մշակութային զավթողականություն» հասկացությունը:

«Մշակութային զավթողականությունը» և «մշակութային դիմակայությունը» առավել ընդգծված դրսևորվում են այն ժամանակ, երբ զավթողականության սուբյեկտը օժտված է հզոր պետականությամբ, զարգացած քաղաքական համակարգով, ռազմական ուժով և այլն, իսկ օբյեկտը գուրկ է այդ ատրիբուտներից, բայց ունի հաստատուն հոգևոր-մշակութային ավանդույթներ, համակարգված մշակույթ և օժտված է հզոր հոգևոր ներուժով: Այլ կերպ ասած, երբ բախումը տեղի է ունենում պետականորեն և քաղաքապես կազմակերպված ազգի և այն ազգի միջև, որը զրկվել է (կամ չունի) այդպիսի կազմակերպական կառույցներ և ձևեր, կամ էլ դրանք թույլ են: Սակայն այդ բացը լրացվում է այլ՝ մշակութային գործունու: Հակամարտող ազգերի մոտ վերոնշյալ ատրիբուտների առկայության դեպքում բախումը ընթանում է գերազանցապես ռազմաքաղաքական, զաղափարախոսական և տնտեսական ոլորտներում: Մյուս, այդ թվում՝ մշակութային գործոնները երկրորդական դեր են խաղում: Դրանք ռազմաքաղաքական գործոնի շարունակությունն են և ինքնաբավ չեն:

Եթե ռազմաքաղաքական, կրոնաեկեղեցական և այլ կարգի զավթողականությունը ենթադրում է զավթողականության սուբյեկտի ակտիվություն, ապա մշակութային բախման դեպքում ակտիվությունը պատկանում է զավթողականության օբյեկտին: Դա ենթադրում է ոչ միայն ամուր մշակութային ավանդույթների, հոգևոր-մշակութային արժեքների զարգա-

ցած համակարգ, այլև բազմակողմանիորեն մշակված գաղափարաքաղաքական հայեցակարգ, իսկ դրա հիման վրա՝ նաև մշակույթի քաղաքական հայեցակարգ: Վերջինիս բացակայության դեպքում մշակութային դիմակայության մասին խոսք լինել չի կարող: Հակառակ պարագայում տեղի կունենա զավթողականության օբյեկտի մշակույթի աստիճանական կլանում սուբյեկտի մշակույթի, մշակութային չափանիշների, արժեքանական նորմերի և իդեալների կողմից: Օբյեկտի մոտ մշակութային ավանդույթների առկայությունը հանգեցնում է դրանց ձևափոխմանը, զավթողականության սուբյեկտի մշակույթի հարստացմանը տեղական տարրերով, բայց՝ ոչ դիմակայության:

Առհասարակ, եթե հարցին մոտենանք մարդկության պատմության տեսանկյունից՝ անտեսելով մշակույթի կոնկրետ արարողներին և կրողներին, այսինքն՝ ազգերը, ապա մշակույթների հանդիպումը հանգեցնում է փոխադարձ հարստացման, համադրման: Այլ հարց է, թե համադրության որ տարրերն են գերիշխում, ավելի ճիշտ՝ պայմանավորում համադրության արդյունքը: Իսկ դրան համապատասխան՝ թե, ի վերջո, ինչպիսի նպատակի է ծառայում այդ մշակույթը:

Նորհրդային շրջանի հոգևոր-մշակութային արժեհամակարգի կործանումը և ժողովրդավարական-ազատամտական վերափոխումների իրականացման փորձերը լայն հնարավորություն ստեղծեցին մինչ այդ արգելված արևմտյան արժեքներին անմիջականորեն հաղորդ դառնալու և յուրացնելու համար: Դրա հետ մեկտեղ կորցրեցինք արժեքանական կոցմտորոշիչներն ու չափորոշիչները, զրկվեցինք այլազան արժեքների լրատվության խայտաբղետ հոսքի մեջ կողմնորոշվելու հնարավորությունից: Ուստի բնավ պատահական չէ, որ արևմտյան քաղաքակրթության «ոգին», իդեալները ներթափանցում են Հայաստան գանգվածային լրատվության միջոցների և առաջին հերթին գանգվածային հոգեբանության համար առավել դյուրընկալելի միջոցների՝ ցածրորակ կինոարվեստի, գովազդների, երաժշտական կլիպերի և նմանօրինակ այլ ուղիներով: Ավելին, արևմտյան արժեքների ընկալումը և ճաշակի յուրացումը գերազանցապես կատարվում է ազգային (հասարակական) ենթագիտակցության մակարդակում:

Քաղաքակրթությունների և մշակույթների «հանդիպումը» արտահայտվում է նաև ուսումնականության համակարգում Հայաստանի Հանրապետության վարած քաղաքականությունում: Այսօր Երևանում բացի պետական համալսարանից գործում են նաև Ամերիկյան, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանները և այլ կրթական հաստատություններ: Երևույթի արտաքին կողմն այն է, որ զարգացած պետությունները (առաջին հերթին դա վերաբերում է ԱՄՆ-ին) օգնում են արդի գիտակրթական մակարդակին և պահանջներին համապատասխանող մասնագետների պատրաստման գործում: Հայաստանի Հանրապետության ծանր սոցիալ-տնտեսական, քաղաքական և սոցիալ-հոգեբանական պայմաններում, սեփական կրթական համակարգը պատշաճ չափով ֆինանսական ներդրումներով հագեցնելու և ապահովելու անկարողության շրջանում նման քայլերը թվում է պետք է սոսկ շնորհակալական խոսքի արժանանալ:

Սակայն տրամաբանական հարց է ծագում՝ արդյո՞ք հիշյալ կրթական հաստատությունները ներկայումս և հեռանկարում հետապնդում են սոսկ «լուսավորական» և «կրթական» նպատակներ՝ անշահախնդիր օգնություն ցուցաբերելով: Մտածել այդպես նշանակում է առնվազն միամտություն ցուցաբերել:

Մասնավորապես նշված համալսարանների շնորհիվ համապատասխան պետությունները ապահովում են իրենց մշակութային ներկայությունը Հայաստանում, տարածում իրենց լեզուն, մշակույթը, մտածելակերպն ու գործելակերպը, մի խոսքով՝ արժեհամակարգը: Այս ամենը նշանակում է նաև որոշակի սոցիալական և հոգևոր դաշտի յուրացում, հասարակական (ազգային) գիտակցության «մշակում», որոշակի միտվածություն ունեցող մտածելակերպի, ապրելակերպի, աշխարհընկալման սկզբունքների, նորմերի և չափանիշների ձևավորում, որոնք միաժամանակ զաղափարաքաղաքական կողմնորոշիչների և իդեալների հիմք են ստեղծում: Այլ կերպ ասած՝ նշված կրթական հաստատությունները կամուրջի, արևմտյան քաղաքակրթության արժեքանական և լրատվության ներհոսքն ապահովող խողովակի դեր են կատարում: Այսինքն՝ կրթական հաստատությունների միջոցով արևմտյան քաղաքակրթության համարվող երկրները ձգտում են համապատասխան աշխարհայացքային,

հոգևոր-մշակութային, գաղափարաքաղաքական կողմնորոշիչներ ձևավորել էտխորհրդային տարածքներում, այդ թվում Հայաստանում, ինչը կարևոր նշանակություն ունի նաև աշխարհաքաղաքական հայեցակարգի տարածման և դրա իրագործման խնդիրների տեսանկյունից:

Արևմտյան կրթական համակարգի առանձին սկզբունքներ թափանցել են նաև հայկական բուհերը (թե՛ պետական, թե՛ մասնավոր): Սակայն այդ «վերափոխումներն» ու «ձևափոխումները» գերազանցապես մեխանիկական պատճենահանման, կրկնօրինակման բնույթ են կրում: Որպես կանոն դրանք գոյակցում են ավանդական սկզբունքների հետ, ինչը չի կարող չանդրադառնալ կրթական ընդհանուր վիճակի և մասնագետների պատրաստման գործընթացի վրա:

Բնականաբար բարձրանում է նաև օտար լեզուների և առաջին հերթին անգլերենի կարգավիճակը: Եթե նկատի ունենանք այն անառարկելի փաստը, որ լեզուն ոչ միայն հաղորդակցման միջոց է, այլև ամբողջական համակարգ, որը վերաոված, կողավորված ձևով բովանդակում է դրա կրող ազգի անցած պատմական, մշակութային, հոգեբանական և այլն ուղիները, ապա պարզ կդառնա, որ այս դեպքում ևս գործ ունենք մշակույթների «հանդիպման» դրսևորման հետ: Սակայն օտար լեզուների իմացության անհրաժեշտությունը, ինչը էապես ընդլայնում է գիտական, ուսումնական կրթական և այլ կարգի տեղեկատվություն ստանալու, այլ քաղաքակրթությունների նվաճումներին հաղորդ դառնալու հնարավորությունները, բնավ չպետք է հանգեցնի մայրենի լեզվի անտեսման կամ թերազնահատման (գիտակցաբար կամ ենթագիտակցաբար), ինչը, ցավոք, նկատվում է հատկապես երիտասարդության շրջանում: Բանն այն է, որ ինչպես ցույց են տալիս հետազոտությունները և բազմաթիվ փաստերը, օտար լեզուների իմացությունը (եթե խնդիրը բուն իմացության մեջ է) ավելի խորքային և ամուր է լինում այն դեպքում, երբ խարսխվում է մայրենի լեզվի իմացության վրա:

Վերջին տասնամյակում Հայաստանում ստեղծված իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու համար անհրաժեշտ է հաշվի առնել պատմության քննությունը բռնած այն սկզբունքը, որ յուրաքանչյուր ազգ (կամ պետություն) առավել լավ և խորն է յուրացնում մյուս ազգերի և պետությունների մշակութային և այլ կարգի արժեքները, երբ ունենում է սեփական

մշակութային-արժեքանական հաստատուն համակարգ, համապատասխան մշակութային գիտակցություն, հայեցակարգ, ծրագիր, որոնց ուսպնյակի միջով և որոնց հիման վրա ստեղծագործաբար յուրացնում և իր ներուժի սահմաններում մասնակցում է համամարդկային (համաշխարհային) արժեքների ստեղծման և զարգացման գործին: Իսկ դրա համար անհրաժեշտ են մշակույթի զարգացման հայեցակարգ և դրա հիման վրա մշակած ծրագիր, ինչպես նաև առկա մշակութային դաշտի և իրագործման միջոցների հիմնավորում: Ծավոք առ այսօր Հայաստանը չունի մշակութային հայեցակարգ, որի հետևանքով մշակույթի արժեքանական ոլորտը, ըստ էության, բարձիթողի վիճակում է: Այն գոյատևում է գերազանցապես տարերայնորեն: Հայ մշակութային կյանքը կարելի է բնութագրել որպես խմորումների կամ ինչպես կասեին որոշ տեսաբաններ արժեքանական «պլյուրալիզմի» (այլակարծության) ժամանակաշրջան:

Սակայն «պլյուրալիզմ» տերմինը համարժեք չի արտահայտում մշակույթի իրական վիճակը Հայաստանում և ավելի շատ քաղաքական միտվածություն ունի: Որովհետև ցանկացած պլյուրալիզմ ենթադրում է ձևավորված, հաստատուն արժեհամակարգերի հավասարություն, «քաղաքացիության իրավունք»: Մինչդեռ մեզանում այդպիսի համակարգեր և հայեցակարգեր առայժմ չկան: Ուստի այս պարագայում ճիշտ կլինի խոսել ոչ թե մշակութային-արժեքանական պլյուրալիզմի, այլ «անարխիզմի» մասին: Մշակույթը Հայաստանում գոյատևում է առանձին անհատների կամ խմբերի ջանքերի, տարբեր միջազգային կազմակերպությունների, կենտրոնների, հիմնադրամների աջակցության, բարեգործությունների շնորհիվ: Մյուս կողմից, բազմաթիվ հայ երեխաներ, երիտասարդներ վերջին տարիներին հնարավորություն ստացան կրթվելու և աշխատելու արևմտյան ուսումնական և գիտական հաստատություններում, ծանոթանալու արևմտյան քաղաքակրթության արժեքների հետ:

Հայկական պետականության լինելիության գործընթացը այսօր պահանջում է հաղթահարել մշակույթին բնորոշ այլազան ու տարաբնույթ արժեքների և կողմնորոշիչների արհեստական համագոյակցությունն ու խաչաձևումը, արժեքանական չափորոշիչների անկայությունն ու կոզնիտիվ (ճանաչողական) անորոշությունը: Այլ կերպ ասած՝ մշակույթի ոլորտում տիրող «անարխիզմը», առկա խմորումներն ու միտումները ան-

հրաժեշտ է վերաձել մշակույթների իրական «երկխոսության» որպես մշակութային-արժեքանական պլուրալիզմի իրական դրսևորման ձևերից մեկի: Գործընթացին նման ուղղվածություն հաղորդելը և հատկապես դրա իրականացումը հեռանկարային առումով, կարծես պետք է ընդունելի լինի մշակույթների «հանդիպման» հիշյալ տարբերակի (երկխոսության) բոլոր կողմերի համար (եթե իհարկե բոլորն էլ բուն մշակութային նպատակներ են հետապնդում): Սույն խնդրի իրականացումը անհրաժեշտաբար պահանջում է ոչ միայն հիմնավորված և ծրագրային մշակութային քաղաքականություն, այլև մշակույթի քաղաքական հայեցակարգի ստեղծում, ինչը ընդհանուր պետական-քաղաքական հայեցակարգի բացակայության պայմաններում ժամանակի հրամայականի կարգավիճակ է ստանում:

Եթե «մշակութային քաղաքականություն» հասկացությունը կիրառելի է պետության (կամ ազգի) նորմալ, բնականոն գոյության և գործառնության պարագայում, ապա «մշակույթի քաղաքական հայեցակարգ» հասկացությունը վերաբերում է այն դեպքերին, երբ ազգը զրկվել է կայուն հոգևոր-մշակութային և արժեքանական համակարգից, տիրում է «մշակութային անարխիզմը», կամ ազգը ստիպված է դիմակայելու արտաքին մշակութային զավթողականությանը, որն ի վերջո ոչ այլ ինչ է քան քաղաքական զավթողամոլության քողարկված ձև: Իսկ քողարկված վտանգը, ինչպես հայտնի է, ավելի կործանարար է լինում, քան բացահայտը: Նշված հասկացությունների («մշակութային քաղաքականություն» և «մշակույթի քաղաքական հայեցակարգ») ընդհանրությունը, ընդհանրական հենքն այն է, որ երկու դեպքում էլ խոսքը ազգային մշակույթի ինքնության պահպանման մասին է. դա է երկու հայեցակարգերի գերագույն խնդիրն ու նպատակը: Ընդսմին, մշակույթի քաղաքական հայեցակարգի ստեղծման ընթացքում պետք է նկատի ունենալ. 1) առկա սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային իրավիճակը, 2) ազգային մշակույթի ինքնության պահպանման անհրաժեշտությունը և 3) արդի աշխարհում կատարվող գլոբալիզացիայի (կամ ինտեգրացիայի) գործընթացները, այն հանգամանքը, որ հայկական մշակույթը ևս համամարդկային մշակույթի բաղկացուցիչ մասն է:

Մշակույթի քաղաքական հայեցակարգի ստեղծումը, առավել ևս՝ իրականացումը գործնականում պահանջում է զավթողականության օբյեկտ դարձած ազգի սոցիալմշակութային և քաղաքական մտածողության զարգացման բարձր մակարդակ, հասարակական և ազգային գիտակցության տարբերակված ձևեր: Միաժամանակ նշված հայեցակարգը, որպես էլակենտային մեթոդաբանական հասկացություն, ենթադրում է «ազգային կեցություն» հասկացությունը, որը հանդես է գալիս նաև որպես ազգի գործունեության բոլոր ձևերի և ուղղությունների, և առաջին հերթին՝ մշակութային նպատակակետն ու իդեալը: Մշակութային բախման որպես հետազոտական ինքնուրույն խնդրի վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել և շեշտել «մշակույթների հանդիպման» ազգային կոդները, որոնց վերլուծությունը արդեն այլ մեթոդաբանական հիմքերի մշակում է պահանջում:

Վերանշյալ նկատառումները չեն սպառում հարցի էությունը, չեն ընդգրկում մշակութային բախման բոլոր ձևերը, ինչը համալիր և համակարգված գիտական հետազոտությունների խնդիր է: Միաժամանակ պետք է հատուկ ընդգծել այն միտքը, որ դրանք «աշխատում են» ոչ միայն պատմական կյանքի, այլև արդի գործընթացների շրջանակներում, ունեն ոչ միայն պատմաճանաչողական, այլև այժմեական-տեսական նշանակություն: Դրանք միշտ հրատապ են լինելու, քանի դեռ գոյություն ունեն պետություններ, ազգեր և քաղաքական շահեր:

Ճավոք սոփալված ենք արձանագրելու, որ այսօր մենք չունենք ոչ միայն մշակույթի քաղաքական հայեցակարգ, այլև շատ թե քիչ մշակված մշակութային քաղաքականություն, ինչը միանգամայն բնական և տրամաբանական է թվում ընդհանուր քաղաքական հայեցակարգի բացակայության պայմաններում: Սակայն ասվածը բնավ չի նշանակում այլ մշակույթների անտեսում կամ թերագնահատում, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Բանն այն է, որ ցանկացած ազգ ավելի լավ և ավելի խորն է յուրացնում մյուսների մշակութային (և այլ կարգի) արժեքները, երբ ունենում է սեփական ազգային-մշակութային, արժեքաբանական հաստատուն համակարգ, զարգացած մշակութային գիտակցություն, որի ռոպսյակի միջոցով և որի հիման վրա ստեղծագործաբար, այլ ոչ թե կուրտրեն, յուրացնում և զարգացնում է համամարդկային համարվող արժեքները: